ԱՌԱՋԱԲԱՆ

Հայաստանում էսթետիկական մտքի ակունքները վերաբերում են մ. թ. V դարին: Սակայն հիմքեր կան ենթադրելու, որ հետաքրքրությունը էսթետիկական պրոբլեմների նկատմամբ Հայաստանում ծագել է շատ ավելի վաղ: Ինչպես հայտնի է, V դարում հայկական մշակույթն արդեն բազմադարյան զարգացման պատմություն ուներ: Հայկական պոեզիան, ճարտարապետությունը, թատրոնը, քանդակագործությունը, որմնանկարը, խճանկարը և այլն զարգանալ են սկսել դեռևս ստրկատիրական հարաբերությունների շրջանում: Այդ են վկայում հունական ու հռոմեական բազմաթիվ աղբյուրները, ինչպես նաև հայ պատմագրական երկերը, որոնք բավականաչափ տեղեկություններ են տալիս հեթանոսական, նախաքրիստոնեական շրջանում հայկական ճարտարապետության, քանդակագործության, թատրոնի, հոետորական արվեստի զարգացման մասին[1]:

Ֆեոդալիզմին նախորդող դարերում զարգացած և հարուստ գեղարվեստական պրակտիկան, ինչպես նաև տեսական մտքի առկայության մասին որոշ տեղեկություններ հիմք են տալիս ենթադրելու, որ արդեն մ. թ. ա. I դարից սկսած Հայաստանում պետք է որ հետաքրքրություն ծագեր արվեստի տեսական հարցերի նկատմամբ[2]:

Հայ գրերի գյուտից հետո հայերեն լեզվով ստեղծվում են փիլիսոփայական հարցերին նվիրված ինչպես թարգմանական, այնպես էլ ինքնուրույն գործեր: Այդ աշխատություններում երբեմն

---

1 Плутарх, Сравнительные жизнеописания, в трех томах, т. II. Изд-во АН СССР, М., 1963, стр. 263.

2 *Հայտնի է, որ դեռ մ. թ. ա. I դարում Հայաստանում գրվում և լայն տարածում էին գտնում հռետորական և փիլիսոփայական աշխատություններ:*

տեղ են գտնում էսթետիկայի հետ անմիջականորեն առնչվող հարցեր (Եզնիկ Կողբացի, Դավիթ Անհաղթ և ուրիշներ):

Հայ մտածողների մեջ հասած մաշտոցատառ առաջին փիլիսոփայական-էսթետիկական գործերը վերաբերում են V—VI դդ.՝ այսինքն այն դարաշրջանին, երբ քրիստոնեությունը, երկրում իշխող կրոն դառնալով, ձգտում էր իրեն ենթարկել գաղափարախոսության և ընդհանրապես հասարակության հոգևոր կյանքի բոլոր բնագավառները:

Հետագայում՝ ամբողջ միջնադարի ընթացքում, հայ մտածողները այլ հարցերի հետ մեկտեղ դիմում էին (ինարկե տարբեր չափով և տարբեր տեսանկյունից) նաև էսթետիկական պրոբլեմների ուսումնասիրությանն ու լուսաբանմանը: Ընդ որում, միմյանց հաջորդել են էսթետիկայի հանդեպ ավելի խոր հետաքրքրության շրջանները համեմատաբար պասսիվ հետաքրքրության շրջաններին:

Էսթետիկական միտքը Հայաստանում հատուկ վերելք ապրեց XIX դարում, երբ նրա զարգացումը ծավալվեց լայնությամբ ու խորությամբ: Դա կատարվում էր այն ժամանակ տեղի ունեցող հոգևոր մշակույթի համակողմանի և ինտենսիվ զարգացման ենթի վրա ու բացատրվում էր մասնավորապես նրանով, որ էսթետիկայի հարցերին, առավել չափով, քան նախկինում, սկսեցին դիմել ինչպես գրականության և արվեստի բազմաթիվ գործիչներ, այնպես էլ (տարբեր առիթներով և նպատակներով) զանազան մասնագիտությունների ներկայացուցիչներ:

Դեռևս մինչհոկտեմբերյան շրջանում՝ XIX դարի վերջից սկսած, մարքս-լենինյան էսթետիկան մուտք է գործում Հայաստան, այնտեղ բարեբեր հող գտնելով իր հաստատման համար:

Հետոհոկտեմբերյան շրջանում էսթետիկական պրոբլեմների նորոգման և հարստացման հետ մեկտեղ խորանում է նաև հետևյալ պրոցեսը: Էսթետիկայի հարցերի մշակման մեջ ներգրավվում են գիտության տարբեր բնագավառների ներկայացուցիչներ, որոնց համար այն հատուկ հետազոտության առարկա է դառնում, ուստի և էսթետիկայի պրոբլեմների նկատմամբ գնալով ավելի ու ավելի է մեծանում ինքնուրույն հետաքրքրությունը: Այս վերջին հանգամանքի նշանակությունը դժվար է գերագնահատել, եթե հաշվի առ-

երվի, որ իր նախորդ ամբողջ պատմության ընթացքում էսթետիկական միտքը Հայաստանում չէր ունեցել այդպիսի բուռն զարգացման շրջան:

Թեև Հայաստանում էսթետիկայի պրոբլեմների նկատմամբ հետաքրքրությունը ունի պատմական ծանրակշիռ ավանդույթ և գալիս է դարերի խորից, բայց և այնպես հայ ժողովրդի էսթետիկական մտքի պատմության հետազոտությունը հետհոկտեմբերյան շրջանի արդյունք է:

XIX դարի և XX դարասկզբի մի շարք հեղինակների հայացքներին նվիրված աշխատություններում առանձին հազվագյուտ ու ցաքուցրիվ պատմա-էսթետիկական բնույթի դիտողությունները ոչ միայն կորչում են այլ գաղափարների ու դրույթների ընդհանուր զանգվածում, այլև Հայաստանում էսթետիկական մտքի պատմության՝ իբրև իմաստության հետազոտման առարկայի առանձնացման արդյունք չեն:

Այդ տեսակետից արժեքավոր են ակադ. Մ. Աբեղյանի հայ գրականության տարբեր հարցերին նվիրված աշխատությունները, որոնք ընդգրկում են պատմա-էսթետիկական որոշ նյութ:

Եթե ոչ միակը, ապա քչերից մեկն է (որի մեջ, թեև հարևանցիորեն, լուսաբանվում է հայ էսթետիկական մտքի պատմության մի շրջանը) Պետերբուրգում 1915-ին լույս տեսած պրոֆ. Նիկողայոս Ադոնցի «Դիոնիսիոս Թրակիացին և հայոց մեկնիչները» նշանավոր աշխատությունը: Քննելով հայ առաջին բերականների հայացքները, Ն. Ադոնցը այսպես թե այնպես բնութագրում է նաև էսթետիկական մտքի վիճակը Հայաստանում վաղ ֆեոդալիզմի շրջանում: Քանի որ բերականական և էսթետիկական միտքն այն ժամանակ հանդես էր գալիս միասնաբար, ապա բերականության հարցերի հետազոտությունն անխուսափելիորեն ստանում էր յուրատեսակ էսթետիկական գունավորում, անուղղակի բնութագրելով նաև էսթետիկական մտքի իրավիճակը: Սակայն Ն. Ադոնցի աշխատությունը վերջին հաշվով լեզվաբանության խնդիրներին նվիրված և ոչ թե էսթետիկական միտքը իբրև այդպիսին ուսումնասիրելու խնդիր հետամտող աշխատություն է: Հետևաբար նրա մեջ էսթետիկական հարցերը չեն ստանում մասնագիտական վերլուծություն,

այլ դրսևորվում են բերականության ու էսթետիկայի նշված միասնության սահմաններում միայն[3]:

Հայաստանում էսթետիկական մտքի պատմությանը նվիրված մինչհեղափոխական շրջանի այլ աշխատություններից է Վենետիկում 1915 թ. հրատարակված հայ մխիթարյան Ս. Երեմյանի «Գրականության պատմությունը և գեղեցիկը» գիրքը: Նրա մեջ հեղինակը լուսաբանում է XIX դարի հայ մշակույթի որոշ գործիչների էսթետիկական հայացքները: Շարադրանքը տրվում է համաշխարհային արվեստի, գրականության ու էսթետիկայի պատմության լայն ֆոնի վրա: Ու թեև գիրքը աչքի չի ընկնում տեսական խորությամբ, իսկ էսթետիկական սակավ նյութի շարադրանքը տրվում է գերազանցապես գրականության պատմության առնչությամբ, այնուհանդերձ այն հետաքրքիր է իբրև Հայաստանում էսթետիկական մտքի պատմության ամենահագեցված շրջաններից մեկի լուսաբանման փորձ:

Պատմա-էսթետիկական որոշակի արժեք են ներկայացնում Ալ. Մյասնիկյանի հոդվածները Մ. Նալբանդյանի մասին:

Ասվեց, որ Հայաստանում բուն էսթետիկական մտքի պատմության ուսումնասիրությունը, ըստ էության, սկսվեց միայն հեղափոխությունից հետո: Հենց այդ շրջանում է, որ այն դառնում է գիտության ինքնուրույն բնագավառ, առանձնացվում իբրև ժողովրդի հոգևոր կյանքի հատուկ ոլորտ[4]:

Բնութագրելով Հայաստանում էսթետիկական մտքի պատմության ուսումնասիրության արդի վիճակը, պետք է ասել նաև հայ գրականության ու արվեստի տարբեր տեսակների պատմության

---

3 *Հայ միջնադարյան քերականների էսթետիկական հայացքների մանրամասն ու հատուկ հետազոտությունը 50-ական թվականներին իրականացրեց ականավոր սովետական էսթետիկ Ա. Ադամյանը իր «Միջնադարյան Հայաստանի էսթետիկական հայացքները. վաղ ֆեոդալիզմի շրջան» աշխատությունում (Երևան, 1955, ռուսերեն):*

4 *Հայաստանում էսթետիկական մտքի պատմության հարցերին նվիրված աշխատություններից կարելի է հիշատակել հետևյալ գործերը՝* Ա. Տերտերյան, *Նալբանդյանի էսթետիկան, Երևանի Պետ. համալսարանի գիտական աշխատություններ, 1939, հ. 10:* Պարոնյանի *էսթետիկական հայացքները՝ «Սովետական գրականություն», 1941, № № 1, 2, 3, 5—6, 9—10:* Ա. Հովհաննիսյան, *Նալբանդյանի էսթետիկան՝ «Նալբանդյանը և նրա ժամանակը», գիրք 2, Երևան, 1956:* Ժ. Ստեփանյան,

հետազոտման մասին, որը մշակվում է բավական խորությամբ, համակողմանիորեն: Բազմաթիվ՝ ինչպես ընդհանրացնող բնույթի, այնպես էլ հայ գրականության ու արվեստի առանձին գործիչների ստեղծագործությունը լուսաբանող աշխատություններում, պատմա-էսթետիկական հետաքրքրություն ներկայացնող որոշ նյութ կա:

Սակայն այդ աշխատություններում հետազոտվում է ոչ թե անցյալի տեսական-էսթետիկական ժառանգությունը, այլ գեղարվեստական ստեղծագործությունը, որն էլ դրանց հատուկ հետազոտության առարկան է: Բացի այդ, շոշափված առանձին էսթետիկական հարցադրումները լուսաբանվում են ենթարկվելով գրականագիտության կամ արվեստաբանության անմիջական պահանջներին: Հետևաբար այն չի կարող իրենով փոխարինել բուն էսթետիկական մտքի ինքնուրույն և հատուկ ուսումնասիրությունը:

Այսուամենայնիվ, պետք է նշել, որ հայ էսթետիկական մտքի պատմությունը ոչ միայն հայագիտության ամենաերիտասարդ, այլև ցարդ քիչ ուսումնասիրված բնագավառն է: Մինչև այժմ չկան ընդհանրացնող բնույթի աշխատություններ, որոնց մեջ տրված լինի Հայաստանում էսթետիկական մտքի պատմության սիստեմա-

---

Մ. Նալբանդյանի էսթետիկական հայացքները, Երևան, 1967։ Ա. Ադամյան, Միջնադարյան Հայաստանի էսթետիկական հայացքները, Երևան, 1955 (ռուսերեն)։ Ս. Թովմասյան, Ստ. Պալասանյանի էսթետիկական հայացքները, Երևան, 1959։ Ստ. Թոփչյան, Շիրվանզադեի էսթետիկան, Երևան, 1963, Բաֆֆու էսթետիկական հայացքները, Երևան, 1971։ Ցա. Խաչիկյան, Ս. Թովմասյան («Հայաստան» բաժինները), «Էսթետիկայի պատմություն։ Համաշխարհային էսթետիկական մտքի հուշարձաններ», հ. 4, 2-րդ մաս, «Իսկուսստվո», Մ., 1968, հ. 5, 1970 (ռուսերեն)։ Ցա. Խաչիկյան, Մ. Ղազարյան (հայկական բաժինները), «Արվեստի վարպետները արվեստի մասին», հ. 6, «Իսկուսստվո», Մ., 1969, հ. 7, 1970 (ռուսերեն)։ Հ. Ապրեսյան, Անդրկովկասի ժողովուրդների էսթետիկական միտքը, «Իսկուսստվո», Մ., 1968 (ռուսերեն), «Գեղեցիկը և բարին. Անդրկովկասի ժողովուրդների էսթետիկական մտքի պատմությունից», Մոսկվայի համալսարանի հրատարակչություն, Մ., 1966 (ռուսերեն), «Հայ էսթետիկական մտքի պատմությունից», «Հայաստան», Ե., 1973 (ռուսերեն)։ Կան նաև մեծ թվով արժեքավոր գիտական հոդվածներ, որոնք լուսաբանում են Հայաստանում էսթետիկական մտքի պատմության տարբեր հարցեր։ Այս հարցին որոշ ուշադրություն են դարձնում հայ փիլիսոփայության պատմությանը նվիրված կապիտալ աշխատությունների հեղինակներ՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Վ. Զալոյանը և պրոֆ. Հ. Դաբրիելյանը։

տիկ և լրիվ շարադրանքը[5]: Գիտությունը իր տրամադրության տակ դեռևս սակավաթիվ աշխատություններ ունի՝ նվիրված ինչպես առանձին հայ մտածողների էսթետիկական հայացքների վերլուծությանը, այնպես էլ էսթետիկական մտքի այս կամ այն պատմական շրջանի զարգացման ծավալուն բնութագրմանը: Անգամ XIX դարը և XX դարի սկիզբը, որը ամենահարուստներից է նյութի տեսակետից և ամենամոտը՝ ժամանակագրական իմաստով, բոլորովին անբավարար է ուսումնասիրված:

Ասվածին պետք է ավելացնել, որ մինչև այժմ չի ստեղծվել մամուլում ցրված վիթխարի նյութի փիչ թե շատ ամբողջական բիբլիոգրաֆիա, չկա նաև առանձին գրքերի ու ձեռագրերի ցուցակ:

Հայաստանում էսթետիկական մտքի ակադեմիական պատմության ստեղծման նանապարհին սպասվում է մեծ աշխատանք գոյություն ունեցող «սպիտակ բծերի» վերացման ուղղությամբ: Պետք է վեր հանել պատմա-էսթետիկական առումով հետաքրքրություն ներկայացնող ամբողջ տպագրված ու ձեռագիր նյութը, բնութագրել հայ մշակույթի գործիչների (ոչ միայն տեսաբանների, փիլիսոփաների, այլև գեղարվեստական պրակտիկայի ներկայացուցիչների) էսթետիկական հայացքները, տալ Հայաստանում էսթետիկական մտքի պատմության պարբերացման և հիմնական ուղղությունների դասակարգման գիտական մշակումը:

Այս խնդիրների լուծմանը զգալիորեն կօգնի ոչ միայն մենագրությունների, այլև հոդվածների ժողովածուների հրատարակումը, որոնց մեջ տեղ կգտնեն հայ էսթետիկական մտքի պատմության ամենատարբեր հարցերին նվիրված գործեր: Մեծ օժանդակություն կլինի և այդ պատմությանը նվիրված քրեստոմատիայի հրատարակությունը և գիտական մատենագիտության ստեղծումը:

ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտում վերջին տարիներին ստեղծված է հատուկ գիտա-պրոբլեմային խումբ, որի խնդիրը Հայաստանում էսթետիկական մտքի պատմության սիստեմատիկ ուսումնասիրությունն է: Պլանավորվում է մե-

---

[5] *Բացառություն է Հ. Գ. Ապրեսյանի «Հայ էսթետիկական մտքի պատմությունից» աշխատությունը, որը սակայն ընդգրկում է պատմության զարգացումը սկզբից մինչև XVIII դարի վերջը:*

նագրությունների և հոդվածների ժողովածուների հրատարակություն, որոնց (ինչպես նաև մինչև այժմ կատարած աշխատանքի) հիման վրա հետագայում նախապատրաստվելու է ընդհանրացնող երկհատորանոց աշխատություն: Այս մեծ աշխատանքի մեջ կներգրավվեն նաև այլ գիտական հիմնարկություններում ու ուսումնական հաստատություններում աշխատող գիտնականները: Եվ քանի որ այժմ իրականացվող աշխատանքը Հայաստանում էսթետիկական մտքի պատմության նոր՝ համակողմանի և խոր հետազոտության ասպիրան է, մեծ կարևորություն է ստանում այդ աշխատանքի մեթոդաբանական սկզբունքների և հիմնական խնդիրների նշումը: Դրանցից մի քանիսի վրա էլ մենք կանգ կառնենք:

Առաջինը առարկայի և նրա աղբյուրների հարցն է:

Մեր կարծիքով, էսթետիկական մտքի պատմության առարկան (և ոչ միայն Հայաստանում) պետք է լինի էսթետիկան իր պատմական զարգացման մեջ: Իսկ էսթետիկան ինքը պետք է մեկնաբանվի որպես իրականության մեջ էսթետիկականի, աշխարհի էսթետիկական իմացության և մարդու էսթետիկական գործունեության էության ու հիմնական օրենքների մասին տեսական գիտելիքների համակարգ: Նման մոտեցման դեպքում էսթետիկական միտքը չի սահմանափակվի միայն արվեստով և նրա օրենքներով, թեև վերջիններին իրավամբ պատկանում է ամենամեծ տեղը էսթետիկայում և համապատասխանորեն նրա պատմության մեջ: Մյուս կողմից՝ այն չի մեկնաբանվի իբրև էսթետիկական գիտակցության պատմություն, որովհետև վերջինս իր ոլորտով ավելի լայն է, քան էսթետիկական միտքը և իր մեջ է ներառնում նաև արվեստի պատմությունը, մարդկության գեղարվեստական զարգացման պատմությունը: Էսթետիկական կոնցեպցիաների և համապատասխանաբար էսթետիկական կատեգորիաների ու հասկացությունների գոյացումն ու զարգացումը— ահա սա պիտի վեր հանվի և հետազոտվի էսթետիկական մտքի պատմության ուսումնասիրության ժամանակ:

Հետազոտության առարկայի նման ըմբռնումը հիմք է տալիս և աղբյուրների հարցի համապատասխան լուծման համար: Ինքնին, իբրև էսթետիկական մտքի պատմության աղբյուր առաջին հերթին պետք է օգտագործվեն էսթետիկական բնույթի տեսական

աշխատանքները: Բայց, քանի որ ինքը էսթետիկական միտքը երկար ժամանակ հանդես էր գալիս գիտության այլ բնագավառների հետ միասնաբար և հաճախ նրանց հովանու տակ, ապա պատմության ուսումնասիրության համար հուսալի աղբյուր կարող են լինել փիլիսոփայական, քերականական, հռետորական, մանկավարժական, արվեստաբանական, գրականագիտական և նման կարգի այլ աշխատությունները, այն դեպքում, երբ նրանց մեջ կա էսթետիկական նյութ: Միջնադարի էսթետիկական մտքի ուսումնասիրության համար որոշ դեր կարող են ունենալ նաև աստվածաբանական բնույթի երկերը, հատկապես գեղեցկի էությունը և մի շարք այլ էսթետիկական կատեգորիաների կրոնա-իդեալիստական ըմբռնումը բնութագրելու համար:

Շատ կարևոր աղբյուր կարող են հանդիսանալ արվեստի գործիչների տեսական բնույթի գործերը (հոդվածներ, տեսություններ, գրախոսություններ և այլն), ինչպես նաև նամակները և մեմուարային գրականությունը:

Մենք որոշակիորեն մերժում ենք գեղարվեստական երկերը իբրև էսթետիկական մտքի պատմության աղբյուր օգտագործելու տենդենցը: Այս դեպքում ջնջվում է սահմանը արվեստի պատմության և էսթետիկայի պատմության միջև: Իհարկե, գեղարվեստական երկերում մարմնավորվում են որոշ էսթետիկական սկզբունքներ, բայց էսթետիկական մտքի պատմության հետ դրանք անմիջական առնչություն չունեն: Էսթետիկական մտքի պատմությանը հետաքրքրում է ոչ թե արվեստն ինքնին, այլ միտքը, դատողությունը արվեստի մասին, արվեստի էության ու զարգացման իմաստավորումը և ընդհանրացումը: Ուստի, գեղարվեստական երկերը կարող են օգտագործվել իբրև էսթետիկական մտքի պատմության աղբյուր միայն այն դեպքում, երբ նրանց մեջ ուղղակի ձևով առկա են հեղինակի մտորումներն արվեստի մասին ընդհանրապես, այսինքն՝ ըստ էության տեսական բնույթի նյութ, որը ներհյուսված է գեղարվեստական երկին: Այսպիսով, մենք ոչ միայն չենք բացառում, այլ ընդհակառակը, անհրաժեշտ ենք համարում արվեստի ու արվեստաբանության պատմության և էսթետիկական մտքի պատմության փոխհարաբերության բացահայտումը:

Ինչպես հայտնի է, անցյալում հայ ժողովրդի զգալի մասն իր

ֆիզիկական գոյությունը պահպանելու համար հեռանում է հայրենիքից՝ սփռվելով ողջ աշխարհով: Բայց հայկական սփյուռքը երբեք չի խզել իր հոգևոր և գաղափարական կապը մայր հայրենիքի հետ: Տարբեր երկրների հայկական բնակավայրերում շարունակվել է աշխույժ հոգևոր կյանքը, ավելին՝ առանձին պատմաշրջաններում ամենաուշագրավ հոգևոր արժեքներն ստեղծվել են հենց այնտեղ: Ուստի հայ ժողովրդի էսքատիկական մտքի պատմությունն ընդգրկում է աշխարհագրական առումով բավականաչափ լայն շրջան՝ բուն պատմական Հայաստանը և սփյուռքը:

Ասվածից բխում է և մի այլ հանգամանք: Սփյուռքում հայ մշակույթի զարգացումը հենվում է ոչ միայն ազգային տրադիցիաների վրա, այլև այն իրականացվում է այս կամ այն երկրի գաղափարական, քաղաքական կյանքի հետ ակտիվ փոխհարաբերության պայմաններում: Այդ պատճառով Հայաստանում էսքատիկական մտքի պատմության ուսումնասիրության ժամանակ մեծ նշանակություն է ստանում տարբեր երկրների ու ժողովուրդների մշակույթի հետ նրա բազմազան կապերի ու փոխազդեցության բացահայտումը:

Ռուս ժողովրդի մշակույթի բարերար ազդեցությամբ արդեն մոտ մեկ ու կես հարյուրամյակ ընթանում է հայ ժողովրդի ինքնուրույն մշակույթի զարգացումը: Այդ փոխազդեցության լուսաբանումը Հայաստանում էսքատիկական մտքի պատմության հետազոտության կարևոր խնդիրներից մեկն է:

Վերջապես՝ ևս մի նկատառում: Քրիստոնեական գաղափարախոսության իշխանության պայմաններում ընդհուպ մինչև XIX դարի երկրորդ կեսը՝ մինչև հայ մեծ հեղափոխական-դեմոկրատ Մ. Նալբանդյանի աշխատությունները, Հայաստանում էսքատիկական մտքի պատմության մեջ չի նշմարվում քիչ թե շատ զարգացած մատերիալիստական գծի առկայություն: Սակայն դա չի կարող տանել էսքատիկայի պատմության մեջ իդեալիստական բնույթի աշխատանքները արհամարհելուն ու թերագնահատելուն: Նախ՝ նրանք անհրաժեշտ են էսքատիկայի պատմության մեջ հենց իդեալիստական ուղղությունը բնութագրելու համար: Երկրորդ՝ Հայաստանում, ինչպես և մի շարք այլ երկրներում, էսքատիկայի հարցերի դրական, ռացիոնալ մշակումը երբեմն իրականացվում

էր նաև իդեալիզմի շրջանակում: Բացի այդ, հասարակական գիտակցության զարգացման բարդությունն արտահայտվում է մասնավորապես նրանում, որ հանախ էսթետիկայի առանձին հարցերի ըստ էության մատերիալիստական մեկնաբանության կարելի է հանդիպել իդեալիստական բնույթի գործերում:

Համառոտակի այսպիսին են Հայաստանում էսթետիկական մտքի պատմության ուսումնասիրության վիճակը և հիմնական խնդիրները:

* * *

Ընթերցողների ուշադրությանը ներկայացվող այս ժողովածուն առաջինն է այն գրքերից, որոնք կնախապատրաստեն հայ ժողովրդի էսթետիկական մտքի պատմության հետագա սիստեմատիկ և ամբողջական շարադրանքը:

ՅԱ. Ի. ԽԱՉԻԿՅԱՆ